

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
 ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ռ. Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

*ՀՀ Սփյուռքի նախարար,
 ԳԴՀ խորհրդի նախագահ,
 իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Հասարակության և պետության կյանքում անփոխարինելի դերակատարություն ունի պառլամենտը: Հայաստանի երրորդ Հանրապետությունում աստիճանաբար արմատավորվում է պառլամենտական աշխատանքի մշակույթ և ձևավորվում է պառլամենտարիզմ¹: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները և դրանց դադարման հիմքերը նախատեսված են ՀՀ Հիմնական օրենքում: ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորական լիազորությունների դադարման հիմքերն են.

- Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելը և նոր ընտրություններ անցկացնելը,

- Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ Ազգային ժողովն արձակելը,

- ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները (գործունեության անհամատեղելիության մասին պահանջը) խախտելը, այն է՝

- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը,

- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,

- այլ վճարովի աշխատանք կատարելը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը,

- մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելը և Կանոնակարգով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի կողմից դրանք անհարգելի ճանաչելը,

¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ռ. Ռ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան: Տիգրան Մեծ, 2007, 708 էջ:

- ազատագրկման դատապարտվելը և դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը,

- դատարանի կողմից անգործունակ ճանաչվելը,

- պատգամավորի կողմից գրավոր դիմում ներկայացնելը՝ հրաժարական տալը, որը սահմանված կարգով ընդունվել է:

Պատգամավորի լիազորությունների դադարման հիմքերն ամրագրված են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում: Բացի սահմանադրորեն ամրագրված հիմքերից, նախատեսված են նաև Ազգային ժողովի պատգամավորի մահվան փաստը, պատգամավորի ընտրության գրանցումը չեղյալ հայտարարելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը: Նման դեպքերում Ազգային ժողովում կազմվում է պատգամավորի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, և Ազգային ժողովի նախագահի ստորագրությամբ արձանագրությունը հնգօրյա ժամկետում ուղարկվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով»: Այսինքն՝ այնպես, ինչպես անձը Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները ստանձնում է սահմանված կարգով, այնպես էլ որոշակի կարգով դադարում են նրա լիազորությունները:

Պատգամավորի լիազորությունների դադարումն օրինաչափ է ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման հիմքով:

Եթե պատգամավորը ենթարկվում է քրեական պատասխանատվության ու պատժի՝ ազատագրկման ձևով, ապա դադարում են նրա պատգամավորական լիազորությունները: Լիազորությունների դադարման հիմք է պատգամավորի հրաժարականը, այսինքն՝ նրա որոշումը՝ վայր դնելու իր պատգամավորական լիազորությունները: Հրաժարականը պատգամավորի դիրքորոշման արտահայտությունն է, որը կարող է թելադրված լինել տարբեր դրդապատճառներով, անձնական, ընտանեկան և այլ հանգամանքներով: Նման դեպքեր արձանագրվել են Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության ընթացքում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով նախատեսված է հրաժարականի հիմքով պատգամավորի սահմանադրական լիազորությունների դադարման հետևյալ կարգը. պատգամավորն այդ մասին գրավոր դիմումը անձամբ ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, ով այն հրապարակում է Ազգային ժողովի առաջիկա նիստում: Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված է, որ՝ «Եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ 15 օրվա ընթացքում, պատգամավորը գրավոր դիմումով՝

ա) հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային ժողովի նախագահն առաջիկա նիստում Ազգային ժողովին տեղեկացնում է այդ մասին.

բ) հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է Ազգային ժողովի նախագահը և հնգօրյա ժամկետում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

Այսուհանդերձ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, պատգամավորի մանդատի ծագման ժամկետի, պահպանման և դադարեցման հիմքերի հետ կապված, անկաստար է: Մեր կարծիքով՝ սահմանադրական բարեփոխումները պետք է անդրադառնան այս խնդրին և հնարավորինս ամբողջացնեն գործող նորմերը: Լուծումներ չեն տրված այնպիսի դեպքերի, ինչպիսիք են՝

1. պատգամավորն անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել, և այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտել,

2. արձակվել է Ազգային ժողովը, սակայն պատգամավորների լիազորությունները այս դեպքում պետք է շարունակվեն (ընտրողի հետ՝ այլ ձևերով) մինչև արտահերթ ընտրություններով ձևավորված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը,

3. ՀՀ Սահմանադրության 2009 թվականի փոփոխությունների արդյունքում երկքաղաքացիությունն արգելող նորմը հանվել է, ուստի անհրաժեշտ է արգելել երկքաղաքացիություն ունեցող անձանց ընտրությունը որպես Ազգային ժողովի պատգամավոր. չի բացառվում, որ նույն մարդը կարող է մյուս երկրում ստանձնել պետական պաշտոն, ընտրվել ներկայացուցչական մարմնում: Պետք է հաշվի առնել նաև պետական կամ այլ գաղտնիքի տիրապետելու խնդիրը: Կամ, դիցուք, այլ երկրում տվյալ անձը պարտադրված մասնակցում է այնպիսի որոշման ընդունմանը, որը հակասում է Հայաստանի Հանրապետության շահերին և այլն: Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները, ՀՀ Սահմանադրության 30.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, սահմանվում են օրենքով: Մեր կարծիքով, սակայն, այն իր սահմանադրական ամրագրումը պետք է ստանա բարեփոխումների ընթացքում, քանի որ 67-րդ հոդվածը սահմանում է Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունների դադարման հիմքերը, իսկ 64-րդ հոդվածը հռչակում է, որ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Նկատենք, որ անհարգելի բացակայության պատճառով պատգամավորին մանդատից զրկելու դրույթը չի գործում: Այդ է վկայում տասը տարիների փորձը, երբ, չնայած բազում նման դեպքերի, որևէ պատգամավոր չի զրկվել իր մանդատից: Կարծում ենք, անհարգելի բացակայության մասին խնդիրը պետք է լայն հասարակական հնչեղություն ստանա: Յուրաքանչյուր նստաշրջանից հետո կարելի է նիստի վերջում հեռուստատեսությամբ կամ էլեկտրոնային լրատվամիջոցներով հրապարակել այն բոլոր պատգամավորների անունները, ովքեր առանց հարգելի պատճառի բացակայել են նիստերից, մամուլում տպագրել նրանց անունները, ինչպես նաև բացակայած օրերի համար զրկել աշխատավարձից: Նմանատիպ միջոցները կարող են հասարակության մեջ համապատասխան վերաբերմունք ձևավորել տվյալ պատգամավորի նկատմամբ, և ընտրողն էլ հաջորդ ընտրության ընթացքում կարող է ճիշտ կողմնորոշվել՝ իմաստ ունի՝ տվյալ պատգամավորության թեկնածուին ընտրել օրենսդիր մարմնի կազմում, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ համարժեք կարգավիճակ ունեցող պատգամավորները, ովքեր ընտրվել են ժողովրդի կողմից, չպետք է իրավունք ունենան զրկելու իրենց գործընկերոջը մանդատից՝ անկախ Ազգային ժողովի նիստերին բացա-

կայությունների թվից: Թեև որոշ երկրների սահմանադրություններում տեղ է գտել անհարգելի բացակայության պատճառով պատգամավորին մանդատից զրկելու մասին դրույթը (օրինակ, Նիգերիայում պատգամավորը զրկվում է իր մանդատից՝ տարվա ընթացքում լիազումար նիստերի 1/6-րդից բացակայելու, Նամիբիայում՝ մինչև 10 նիստի չմասնակցելու դեպքում), այնուամենայնիվ, մենք գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում հետագա սահմանադրական բարեփոխումների ընթացքում բացակայությունների պատճառով պատգամավորին մանդատից զրկելու նորմը պետք է վերանայել:

Կան երկրներ, որտեղ պառլամենտականը կարող է զրկվել մանդատից այլ կուսակցության շարքերն անցնելու, իրավախախտումներ կատարելու և էթիկայի նորմերը խախտելու հիմքերով: Որպես կանոն, պատգամավորին մանդատից զրկելու մասին որոշումն ընդունվում է պառլամենտի կողմից՝ ձայների որակյալ մեծամասնությամբ (2/3-րդը՝ Արգենտինայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, 5/6-րդը՝ Ֆինլանդիայում): Եթե պատգամավորը խախտում է էթիկայի նորմերը, չի կատարում իր պարտականությունները, ապա նրա նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ պարսավանք հայտնելով, արձանագրություն կազմելով: Գերմանիայում, Լեհաստանում կարող են պահումներ կատարվել պատգամավորի աշխատավարձից: Ֆրանսիայում պատգամավորը կարող է զրկվել աշխատավարձի երկրորդ, այսինքն՝ ոչ հիմնական մասից²: Պատգամավորը ժամանակավորապես կարող է հեռացվել պառլամենտական աշխատանքից կամ պարտականությունների չկատարման, կոպիտ ու պարբերաբար խախտումների հետևանքով՝ զրկվել իր մանդատից: Շատ երկրներում պառլամենտի կողմից պատգամավորին մանդատից զրկումը կարող է բողոքարկվել Սահմանադրական կամ այլ դատարան: Սա ճիշտ լուծում է, և կարելի է նման մոտեցում որդեգրել Հայաստանի Հանրապետությունում՝ Սահմանադրության փոփոխությունների ժամանակ, Ազգային ժողովի կանոնակարգը վերանայելիս, ինչպես նաև Սահմանադրական դատարանի մասին նոր օրենք ընդունելիս:

Օրենսդիր մարմնի նկատմամբ կիրառվող սահմանադրական պատասխանատվության խիստ միջոցը տարբեր կերպ է անվանվում, օրինակ՝ ներկայացուցչական մարմնի լուծարում, արձակում, լիազորությունների վաղաժամկետ դադարեցում կամ լիազորությունների ժամկետի կրճատում³: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հանրապետության Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն: ՀՀ Սահմանադրության մեջ քանիցս հիշատակվում է Ազգային ժողովի «արձակում» տերմինը (55-րդ հոդվածի 3-րդ կետ, 63, 67, 74.1-րդ հոդվածներ): Օրենսդիր մարմնի նկատմամբ հանդես գալով որպես նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն⁴ կիրառող սուբյեկտ՝ Հանրապետության Նախա-

² Ст'ю Конституционное право зарубежных стран, М., 2001, էջ 275:

³ Ст'ю Конституционное (государственное) право зарубежных стран, М., 1995, Т. 3; Конституции государств Европы, М., 2001:

⁴ Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան: Իրավունք, 2008, 516 էջ:

գահն իրավագոր է արձակելու Ազգային ժողովը՝ Սահմանադրության 74.1-րդ հոդվածում նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Այդ հիմքերն են.

1. Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Ազգային ժողովը կարող է խուսափել արձակումից, եթե հավանություն տա կառավարության ծրագրին, այնուհետև Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվստահություն հայտնի կառավարությանը:

Անխոցելի և հիմնավոր չեն նաև Ազգային ժողովի արձակման մյուս հիմքերը: Այսպես, Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել օրենսդիր մարմինը, եթե՝

2. Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ:

Եթե օրենսդիր մարմնի անդամները չեն ցանկանում խորհրդարանի լուծարում, ապա երեք ամսվա ընթացքում որոշում կկայացնեն կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրինագծի վերաբերյալ:

3. Հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում:

Նման իրավիճակ տեսականորեն կարելի է հնարավոր համարել այն դեպքում, երբ խորհրդարանը խոր ճգնաժամ է ապրում և տարվա մեկ քառորդ մասն անգործության է մատնվել:

4. Հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում:

Այս իրավիճակը գործնականում դժվար է պատկերացնել, քանի որ խորհրդարանը չի կարող երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող որևէ հարցի վերաբերյալ դրական կամ բացասական որոշում չընդունել:

Այսպիսով, խորությամբ վերլուծելով այն պայմանները, որոնց դեպքերում Հանրապետության Նախագահը կարող է արձակել պառլամենտը, պարզ է դառնում, որ ցանկության դեպքում Ազգային ժողովը կարող է խուսափել արձակումից:

Լատվիայում՝ որպես խորհրդարանական հանրապետություն, Նախագահը չի կարող արձակել խորհրդարանը (Սաեման): Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ նա իրավունք ունի առաջարկել Սաեմայի արձակում: Այնուհետև պետք է անցկացվի համաժողովրդական հանրաքվե, և հանրաքվեի արդյունքներով միայն պետք է որոշվի օրենսդիր մարմնի արձակման հարցը⁵: Հանրաքվեի ճանապարհով ներկայացուցչական մարմինը լուծարվում է նաև Լիխտենշտայնում (Սահմանադրության 48-րդ հոդված)⁶: Իսկ մեկ այլ խորհրդարանական հանրապետությունում՝ Մակեդոնիայում, օրենսդիր մարմինը՝ ժողովը, արձակվում է ինքնալուծարման կարգով: Այսպես՝ Մակեդոնիայի Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝ ժողովը լուծարվում է, եթե ներկայացուցիչների կե-

⁵ Ст'а Конституция Латвийской Республики // Նույն տեղում:

⁶ Ст'а Конституция Княжества Лихтенштейн // Bayensche Julius – Mayimi Lians – Universtaet, Wuerzburg, 2000:

սից ավելին քվեարկում են արձակման օգտին⁷: Հատկանշական է, որ խորհրդարանի արձակումը չունի սահմանված հատուկ ձև, որոշակի ընթացակարգ, քանի որ դրա համար բավական են Նախագահի հայտարարությունն այդ մասին և նրա ընդունած համապատասխան ակտը: Այսպիսով, աշխարհում պառլամենտների արձակման առավել տարածված հիմքը պատգամավորական կազմի անկարողությունն է՝ հաստատելու կառավարության ղեկավարի թեկնածությունը կամ ձևավորելու կառավարություն: Օրինակ, Ռումինիայի խորհրդարանը կարող է արձակվել, եթե վաթսուն օրվա ընթացքում վստահության քվե չի տալիս ձևավորված կառավարությանը և եթե դրանից առաջ ոչ պակաս, քան երկու անգամ չի հաստատել վարչապետի թեկնածությունը: Բազմաթիվ պետությունների հիմնական օրենքներ Նախագահին իրավունք են տալիս արձակելու խորհրդարանը՝ կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում: Մասնավորապես, Հունգարիայի Սահմանադրությամբ նախատեսված է նման սահմանադրաիրավական սանկցիա խորհրդարանի նկատմամբ, եթե տասներկու ամսվա ընթացքում Պետական ժողովը չորս անգամ անվստահություն է հայտնել կառավարությանը: Մի շարք երկրներում արձակումը կապված է խորհրդարանի՝ կառավարության ծրագիրը հաստատելու իրավունքի հետ: Արևելաեվրոպական որոշ երկրներում խորհրդարանի արձակման պատճառ է համարվում սահմանված ժամկետում որոշակի օրենքների չընդունման փաստը: Մասնավորապես, Լեհաստանի Հանրապետության Սեյմը կարող է արձակվել, եթե պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ներկայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում խորհրդարանն այն չընդունի: Մոլդովայի Հանրապետությունում երեք ամսվա ընթացքում օրենքներ չընդունելու դեպքում երկրի Նախագահը խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո իրավունք ունի արձակելու բարձրագույն ներկայացուցչական մարմինը: Իսկ Չեխիայի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է պալատի արձակում, եթե երեք ամսվա ընթացքում պատգամավորները որոշում չընդունեն կառավարության ներկայացրած օրենքների վերաբերյալ, և եթե կառավարությունն այդ նախագծի կապակցությամբ դրել է իր վստահության հարցը: Նման նորմերը հնարավորություն են տալիս Լեհաստանի, Մոլդովայի, Չեխիայի նախագահներին՝ քաղաքական և սահմանադրական ճնշում գործադրելու օրենսդիր մարմնի նկատմամբ՝ ի օգուտ կառավարության: Պետությունների մեծամասնությունում (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ճապոնիա) արձակվում է ստորին պալատը կամ խորհրդարանի միակ պալատը (Հայաստան, Հունգարիա, Հունաստան, Ուկրաինա): Սակայն կան պետություններ (Բելգիա, Իսպանիա, Իտալիա, Նիդերլանդներ), որոնցում Նախագահը խորհրդարանի արձակման իրավունք ունի երկու պալատների նկատմամբ: Լեհաստանին բնորոշ է հետևյալ առանձնահատկությունը. Սենատի լիազորություններն ինքնաբերաբար դադարում են Սեյմի արձակման դեպքում: Բուլղոնիայում այլ կարգ է նախատեսված Չեխիայի Հանրապետության Սահմանադրությամբ, ըստ որի՝ Սենատը ոչ միայն չի արձակվում պատգամավորների պալատի հետ միաժամանակ, այլև անհետաձգելի հանգամանքներում իր վրա է վերցնում արձակված պալատի օրենսդրական լիազորությունները՝ որոշակի

⁷ Տե՛ս Конституция Республики Македония // Конституции государств Европы, М., 2001:

սահմաններում⁸: Սենատի այս լիազորությունը պայմանավորված է ցանկացած իրավիճակում պետական իշխանության համակարգի անխափան գործունեության ապահովման անհրաժեշտությամբ: Օրենսդիր մարմինն արձակելու՝ երկրի Նախագահի իրավունքի հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով բազմաթիվ պետություններում հիմնական օրենքները բովանդակում են այդ իրավունքի կիրառումը տարբեր չափերով ու ձևերով սահմանափակող նորմեր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը չի կարող արձակվել հետևյալ դեպքերում.

1. ռազմական դրության ժամանակ,
2. արտակարգ դրության ժամանակ,
3. երբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի արձակումը կկազմալուծի երկրի հասարակական-քաղաքական առանց այդ էլ լարված իրավիճակը, և Հանրապետության Նախագահն այլևս հակակշիռ չի ունենա, ինչը կհակասի պետական իշխանության ինստիտուտների միջև «զսպումների և հակակշիռների» ապահովման սկզբունքին: Իսկ Ֆրանսիայի Նախագահն Ազգային ժողովի արձակումից առաջ պետք է խորհրդակցի պառլամենտի երկու պալատների նախագահների հետ, սակայն վերջիններիս կարծիքը պարտադիր չէ նրա համար: ՀՀ Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելու մասին դրույթ նախատեսված էր 1995 թվականի ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետում, ինչը սահմանադրական բարեփոխումների արդյունքում հանվեց: Փոխարենը սահմանվեց, որ 74.1-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ Հանրապետության Նախագահը կարող է արձակել օրենսդիր մարմինը: Խորհրդարանի պալատների ղեկավարների հետ Նախագահը պետք է խորհրդակցի նաև Ռումինիայում, Սլովակիայում, Բելառուսում: Այլ երկրներում նախատեսված են ավելի խիստ սահմանափակումներ: Այսպես՝ Նախագահն իրավունք չունի արձակելու խորհրդարանը վերջինիս գործունեության առաջին ամիսների ընթացքում, օրինակ, Շվեդիայում՝ առաջին երեք ամիսների ընթացքում, Պորտուգալիայում, Լիտվայում՝ վեց ամսվա, Հունաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Ֆրանսիայում՝ մեկ տարվա ընթացքում: Նման սահմանափակման նպատակն է հնարավորություն ստեղծել նոր ձևավորված խորհրդարանի արդյունավետ և անխափան գործունեության համար: Չեխիայում նման սահմանափակումը տարածվում է նաև պատգամավորների պալատի լիազորությունների վերջին երեք ամսվա վրա: Որպես կանոն, երկրի Նախագահը չի կարող արձակել խորհրդարանն իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում: Նման դրույթ սահմանված է Իտալիայի, Լիտվայի, Պորտուգալիայի, Ռուսաստանի, Ռումինիայի հիմնական օրենքներում: Դա բացատրվում է նրանով, որ չպետք է թույլ տալ պետության գլխի և օրենսդիր մարմնի ընտրությունների համընկնում: ՀՀ 1995 թվականի Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետն արգելում էր Հանրապետության Նախագահին արձակել Ազգային ժողովը՝ Նախագահի պաշտոնավարության վերջին վեց ամսվա ըն-

⁸ St'u Конституции зарубежных государств, М., 1999, էջ 380:

թացքում, ինչպես նաև՝ Ազգային ժողովի ընտրությունից հետո՝ մեկ տարվա ընթացքում (63-րդ հոդվածի 4-րդ մաս): Այժմ այդ սահմանափակող նորմերը հանվել են: Ազգային ժողովի արձակում չի թույլատրվում այն դեպքում, երբ Հանրապետության Նախագահին պաշտոնաձև անելու հարց է հարուցված: Խորհրդարանի արձակման իրավունքը սահմանափակող այս նորմը նախատեսված է նաև Ռուսաստանի, Բելառուսի և այլ պետությունների սահմանադրություններում: Նշված սահմանադրական արգելքը նպատակ ունի թույլ չտալու իշխանության կազմալուծում, պաշտոնակության վտանգի առջև կանգնած Նախագահի կողմից օրենսդիր մարմնի արձակում և այդպիսով իր պաշտոնակության կանխում: Եթե Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանը չի կարող արձակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ապա Լեհաստանում՝ նաև այդ ռեժիմների վերացումից հետո երեք ամսվա ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում, իսկ վերջինիս լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը:

КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВАНИЯ ПРЕКРАЩЕНИЯ ПОЛНОМОЧИЙ ДЕПУТАТА НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РА

Г. Г. АКОПЯН

В каждом государстве законодательный орган осуществляет важнейшие конституционные функции.

Полномочия депутата Национального Собрания Республики Армения и основания их прекращения предусматриваются Конституцией РА.

В статье рассматриваются следующие основания прекращения депутатских полномочий: истечение срока полномочий Национального Собрания; роспуск Национального Собрания Республики Армения Президентом РА; нарушение требования о несовместимости деятельности, а именно: занятие должности в органах местного самоуправления или в коммерческих организациях; занятие предпринимательской деятельностью; выполнение иной оплачиваемой работы, кроме научной, педагогической и творческой; а также потеря гражданства Республики Армения; неуважительные отсутствия; тюремное заключение; признание судом недееспособности; добровольный отказ от полномочий и факт смерти.

CONSTITUTIONAL GROUNDS FOR THE TERMINATION OF POWERS OF A NATIONAL ASSEMBLY DEPUTY OF THE RA

Н. Н. НАКОВЯН

The legislative body has an irreplaceable role in the life of society and state. In the RA the powers of a National Assembly, as well as their termination are defined by the Constitution of the RA. The following grounds for the termination of powers of a deputy are discussed in the article: expiration of term of office of the National Assembly, dissolution of the National Assembly of the RA by the President of the Republic, violation of the requirement not to hold more than one office, that is to say: holding an office in state and local self-government bodies or in commercial organizations, being engaged in entrepreneurial activities, as well as any other paid occupation, except scientific, educational and creative work, loss of

citizenship of the Republic of Armenia, inadequate absence, prison sentence, legal incapacity, resignation from office, case of death.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԼԻՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Իրավունքի փիլիսոփայությունը համալիր փիլիսոփայական և իրավաբանական գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի հասկացությունը և էությունը, իրավունքի արժեքը, դերն ու նշանակությունը մարդու, հասարակության և պետության կյանքում:

Իրավունքի փիլիսոփայությունը կազմում է պետության և իրավունքի տեսության և ընդհանրապես ողջ իրավագիտության հիմքը: Իր հերթին իրավագիտությունն է նպաստում իրավափիլիսոփայական հայացքների զարգացմանը:

Իրավունքի փիլիսոփայությունը միջանկյալ գիտություն է, գտնվում է փիլիսոփայության և իրավագիտության հատույթում և խնդիր ունի պատասխանելու հետևյալ հիմնական հարցին. «Ի՞նչ է իրավունքը»:

Իրավունքի փիլիսոփայությունը ընդհանուր փիլիսոփայության բաղկացուցիչ մասն է, այնպես, ինչպես փիլիսոփայության բաղադրիչներն են բնության փիլիսոփայությունը, մարդու փիլիսոփայությունը, կյանքի փիլիսոփայությունը, կրոնի փիլիսոփայությունը, պատմության փիլիսոփայությունը, բարոյականության փիլիսոփայությունը, գիտության փիլիսոփայությունը և այլն¹:

Իրավունքի փիլիսոփայությունը հիմնարար գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքի տեղն ու դերը աշխարհի մասին փիլիսոփայական ուսմունքի համատեքստում, սոցիալական կյանքի կազմակերպման ձևերն ու կառուցակարգերը, հասարակության արժեքնորմատիվային համակարգը, իրավունքի էությունը, իրավունքի հետազոտման մեթոդաբանությունը, իրավագիտական հասկացությունները, իրավունքի համակարգի կատարելագործման ուղիները, իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացները, իրավագիտակցությունը, իրավունքի և օրենքի, ազատության և պատասխանատվության, լիազորության և պարտականության հարաբերակցությունը և այլ կարևոր հիմնախնդիրներ: Ինչպես նշում է Վ. Ներսեսյանցը, իրավունքի փիլիսոփայությունը հետազոտում է իրավունքի դերակատարությունը ժողովուրդների և մարդկության ճակատագրում²:

Իրավունքի փիլիսոփայության ուսումնասիրման առարկան «իրավունքի աշ-

¹ Տե՛ս *Нерсесянц В. С.* Философия права, Учебник для ВУЗов, М., 2003, էջ 15:

² Տե՛ս *Нерсесянц В. С.* Նշվ. աշխ., էջ 7: